ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի «<<Հրազդանի մարզային արյան բանկ>> Պետական փակ բաժնետիրական ընկերությունը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր պաշտոնի համար

- բժիշկ տրանսֆուզիոլոգ կամ բժիշկ տրանսֆուզիոլոգ - հեմատոլոգ - 1,0 դրույք

ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթի մասնակից կարող է լինել ցանկացած անձ, ով կբավարարի ստորև նշված պայմաններին՝

1. բարձրագույն (միջին մասնագիտական) բժշկական և հետդիպլոմային կրթության առկայություն համապատասխան մասնագիտությամբ.
2. վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն, եթե մասնագիտացումն ավարտելուց անցել է առավել քան հինգ տարի.
3. բժշկական էթիկայի կանոնների իմացություն:

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող ՀՀ քաղաքացի, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացի, ով ունի կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Թափուր տեղի հավակնորդների կողմից ներկայացվում է՝

1. դիմում (լրացվում է տեղում)
2. մեկ լուսանկար 3 x 4 չափի
3. քաղվածք աշխատանքային գրքույկից (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում)
4. ինքնակենսագրություն
5. անձնագրի, միջին մասնագիտական, իսկ բժիշկ-մասնագետի թափուր պաշտոնի մրցույթի դեպքում բարձրագույն և հետբուհական (ում բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելու ժամանակահատվածում օրենսդրությամբ սահմանվել է հետբուհական կրթության պահանջ (ինտերնատուրա, կլինիկական օրդինատուրա)) մասնագիտական կրթության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմի), վերապատրաստման վկայականի (դրա առկայության դեպքում) պատճեներն ու բնօրինակները
6. արական սեռի անձինք՝ նաև զինգրույքի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն
7. նախորդ աշխատավայրից բնութագիր (եթե այդպիսին առկա է)
8. օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետության կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո մրցույթի մասնակիցը կծանոթանա այն իրավական ակտերի ցանկին, որոնցից բաղկացած է լինելու հարցատոմսը:

Փաստաթղթերը ընդունվում են <<Հրազդանի մարզային արյան բանկ>> Պետական փակ բաժնետիրական ընկերությունում ամեն օր ժամը 10.00 – 17.00, բացի շաբաթ և կիրակի օրերից (ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան Ղուկասյան 40, հեռախոս 093-53-54-57): Դիմումների ընդունման վերջնաժամկետը 18.07.2018թ.:

Մրցույթը տեղի կունենա «Հրազդանի մարզային արյան բանկ» ՊՓԲԸ-ում 19.07.2018 թ. ժամը 10.00 - ին:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել «Հրազդանի մարզային արյան բանկ» ՊՓԲԸ- ի աշխատանքային խմբին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: